

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ԵՂԻՎԱՐԴ (Եղիշե Պատրիարք Տէրտէրեան) . «ԼԵԹԱՆՈՍԱՑ ԱՌԱՔԵԱԼԸ»:

Երուսաղէմ, 1975, տպ. Սրբոց Յակոբեանց, 192 էջ:

«Կրօնական գրականութեան ընթերցողներու» սեղանին է դրուած Եղի-
վարդի վերոյիշեալ արժէքաւոր ու հոգեշահ ուսումնասիրութիւնը, ուր ներկա-
յացուում է «կեանքն ու գործը քրիստոնէութեան մեծ փողահարին, որ Հեթա-
նոսաց Առաքեալ կը յորջորջուի»:

Բովանդակալից սոյն ուսումնասիրութիւնը բաղկանում է երկու բա-
ժիններից:

Մասն առաջին. ինը գլուխ (էջ 7-62):

Մասն երկրորդ. տասնհինգ գլուխ (էջ 64-192):

Ուսումնասիրութիւնը բացւում է կուռ, հմտալից, Տէրտէրեանական
դեղեցիկ «Երևու խօսք» յառաջարանով, ուր սրբազան Հեղինակը ներկայացը-
նում է սոյն հատորի գրութեան շարժառիթներն ու նպատակը:

Այսօր մեր Եկեղեցական մատենագրութեան անդատանը չափազանց
աղբաւ է: Եղիվարդն այն սակաւաթիւ եկեղեցական գրողներից է, որի արձակ
ստեղծագործութիւնն իր վրայ է կրում մեր կրօնական դասական գրականու-
թեան գրոշմը:

Այս կալուածի մէջ նա շարունակել ու զարգացրել է անցեալի այդ գը-
րականութեան աւանդութիւնները՝ նոր բովանդակութիւն, ինքնատիպ ու թարմ
սրտայայտչականութիւն հաղորդելով դրանց:

Եղիվարդն իր հարուստ ներաշխարհով ու յոյզերով հաւատաւոր ու
ներշնչուած հոգեւորական է, որ նոր խօսք, նոր շունչ է հաղորդել իր սրտին
մօտ, իր էութեանը հարազատ իր մշակած աստուածաշնչական նիւթերին՝ դը-
րանք դարձնելով միաժամանակ համահնչուն մեր օրերի հաւատացեալների հո-
յերանութեանը, հոգեւոր մտորումներին, ապրումներին ու յոյզերին:

Հեղինակը Պօղոս առաքեալին տուել է այսօրուան ճշմարիտ քարոզչի
երանգ ու դոյն, ժամանակի շնչառութիւն: Հեթանոսաց Առաքեալը պատկանում
է որքան անցեալին, նոյնքան նաև ներկային: Նա մեր ժամանակակիցն է իր «Ա-
ւետարան»ով և իր մեծ գործով:

Ըստ Հեղինակի վկայութեան, Հեթանոսաց Առաքեալը գիրքը մեծ և
բովանդակութեան տեսակէտից շարունակութիւնն է Եղիվարդի Օտարականը
մեծարժէք ստեղծագործութեան:

«Ռտարականը» մէջ Եղիվարդը 1966 թուականին ներկայացրել է բա-
ցառիկ թափով, զեղեցկութեամբ և յուզականութեամբ «երկինքէն երկիր իջած
պատմութիւնը, կեանքը պանդուխտ Աստուծոյ որ մարդ եղաւ»: Իսկ այժմ «Հե-
թանոսաց Առաքեալը» ստեղծագործութեան մէջ Հեղինակը «կը ներկայացնէ
կեանքը մարդու մը՝ որ անաշխարհային սարսուռով բաժնեկից ըլլալ ուղեց
աստուածային երանութեան, անոր ճշմարտութեամբ անէացած»:

Դժուար է պատկերացնել աւելի կենդանի, աւելի ամբողջական ու գրա-
ւիչ կերպով քան ինչ որ Հեթանոսաց Առաքեալինն է:

Սողոս Տարսնոսցին Քրիստոսի 13-րդ առաքեալն է: Նա «չէր տեսած

դՅիսուս — « Կրում է հեղինակը —, սակայն, իրեն յայտնուած տեսիլքով զգացած ու ճանչցած էր Անոր ուժն ու զօրութիւնը... Քիչ ղէմք անցեալի պատմուճա- նով պնդեալուոր կարելի է համեմատել Հեթանոսաց Առաքեալին հետ, ...որ զխոէ տառապանքի մէջ մեծ և արի ըլլալ, ճակատագրի ղէմ՝ լուրջ, ...«բարի լուր»ը աշխարհին տանելու, և իրագործելու Եկեղեցին... Անհատարաններու գը- րութենէն առաջ, քրիստոնէութեան առաջին օրերուն իսկ, յայտնաբերելով ի- մաստր իրմէ վերջ շարունակուող դարերուն... Բացատրելու Քրիստոսը քրիս- տոնեային: Հեթանոսաց Առաքեալը միայն կրնար ըլլալ ոսկի կամուրջը Հրէին և հեթանոսին միջև, որուն վրայէն բոլոր ազգերը Յիսուս-Մեսիային պիտի եր- թային, ընդունելով որդեգրութիւնը Երկնաւոր Հօրը»:

Եղիմարդ սոյն գիրքը չի գրել սովորական ձևով պատմելու համար կեանքը մեծ առաքեալին: Ձի ձգտել որ սոյն հատորը զգէթ այս անգամ, բլլայ գրական փորձ մը, վասնզի իր արտին աւելի մօտ կը նկատէ ճշմարտութիւնը քան գեղեցկութիւնը: Հետևաբար, սոյն հատորը ճիշտագրութիւն մը չէ, այլ խոստում մը ամէն անոնց՝ որոնք պիտի ուզէին պայքարել ճշմարիտ և արդար նպատակի մը հ դատի մը համար»:

Եղիմարդի սոյն հատորը բացուած է Քրիստոսի յարութիւնից եօթ շա- րաթինը յետոյ Երուսաղէմում, Պենտեկոստէի կամ Հոգեգալստեան ղէպից յի- շատակով և տաճարում Պետրոս առաքեալի հրապարակային առաջին մեծ ճա- ոով. «Յիսուս որ խաչուեցաւ, խոստացուած Մեսիան էր, որ յարութիւն առաւ մեռելներէն և յայտնուեցաւ մեզի բոլորիս, իր աշակերտներուն: Երեք տարի- ներ իրեն հետ եղանք, լսեցինք իր խօսքերը և վկաներ եղանք Անոր հրաշալի գործերուն: Ան գերագոյն իրողութիւնն է բոլոր ժամանակներուն, բոցավառ լեռը զիչերտան մէջ, զարուհը մեր օրերու խոստումին, երջանկութեան աւե- տարերը, որ մարդոց հանգիպեցաւ անոնց վշտի ճամբաներուն վրայ՝ իր տա- ոապանքի բարձունքէն, խաչէն, քանալով ճամբան մեր փրկութեան»:

Պենտեկոստէի օրը Երուսաղէմ ուխտի եկած բազմութեան մէջ էր նաև Տարսուսից եկած Էսթրոնքիթ, շողարձակ նայուածքով, կարճահասակ բայց հասաւալիքը երիտասարդ մը, որ կ'եռար իր զայրոյթէն, ունկնդրելով Պետ- րոս առաքեալի մինչ այդ շլուած ճառը ճիշտութեամբ, թաղուած և յարութիւն ա- ոած» մի նոր Մեսիայի ստոյգ զայտտեան և Աստուծոյ արքայութեան հաստատ- ման մասին:

Ո՞վ էր Սողոս Տարսուսացին:

Սողոսը ծնունդ էր կիլիկիայի Տարսոն քաղաքում, Գալիլիայից այն- տեղ զայրթած Հրեայ ծնողներից: Նախնական իր կրթութիւնը ստացել էր հըր- էական սինակոկին կից դպրոցում, ծանօթանալով իր ժողովրդի պատմութեա- նը, Մովսիսական օրէնքին ու հրէական աւանդութիւններին:

Սողոսը տիրապետում էր նաև հելլենական լեզուին ու դպրութեանը և քաջամանօթ էր ժամանակակից յոյն փիլիսոփայական վարդապետութիւննե- րին: Հօրից ժառանգել էր հռոմէական քաղաքացիութեան իրաւունքը, որը մեծ առաւելութիւններ և արտօնութիւններ էր շնորհում նրան: Նա ստացել էր նաև հօր արհեստը, վրանագործութիւն:

Շուրջ քսան տարեկան հասակում ծնողների ցանկութեամբ եկել էր Ե- րուսաղէմ՝ աշակերտելու մեծահռչակ ու ազատամիտ մեծ ուսրի Գամաղիէ- լին, դառնալով համար հմուտ օրէնագէտ Մովսիսական օրէնքին և աւանդու- թիւններին և մոլոսանք պաշտպան ու ջատագով հրէականութեան: Իբրև Հըր- եայ, նա իր ժողովրդի մեծախան երազներով ու յոյսերով էր ապրում. «Ան կ'զգար թէ —գրում է հեղինակը—, մօտ էր օրը իր ցեղի յոգնաղէտ ազատու- թեան և Մեսիայի զայտտեան»:

Հոգեզալստեան հրաշալի դէպքից յետոյ, աճում և կազմակերպւում էր Երուսաղէմում քրիստոնէական առաջին եկեղեցին:

Պաշտօնաւոր յարութիւն առած Մեսիայի մասին առաքելներէ քարոզութիւններն ու նրանց ձեռքով Երուսաղէմի տաճարում կատարուած հրաշալի գործերը ճշմանը մոգականօրէն մը նման կը ճմլէին Սողոմոնի սիրտը: Իսրայէլի հաւատքին մաքուր ջուրը պղտորողները արժանի էին հալածանքի և մահուան: Զարիքը արմատախիլ պէտք էր ընել տակաւին չպողաքերած:

Երուսաղէմում սկսուեց հալածանքը առաքելներէ դէմ: Մովսիսական օրէնքն ու հրէական աստուծոյնը Հզօր աշտարակներն էին Իսրայէլի դոյռութեան, մտածում էր Սողոմը, և գրոյր տնոնք որ կործանել կ'ուզէին այս սըրբազան ժառանգութիւնը, արժանի էին մահուան:

Յանուն քրիստոնէական հաւատի և կրօնական իր նոր համոզմունքներէ առաջին նահատակը եղաւ եօթ սարկաւազներից մէկը՝ Ստեփանոսը, «այր ի շնորհօք և զօրութեամբն Աստուծոյ», որ հաւատաւոր ու տեսլապաշտ իր կեանքն աւարտեց քարկոծութեամբ: «Բազմութիւնը անհամբեր կը գոռար ու կը դալարուէր զայրոյթէն, սեղմած իր բռունցքները և ժուշած իր աչքերը արևան ակնաբոյժի», գրում է սըբազան հեղինակը, մինչ չլուռ էր Ստեփանոս ու խաղաղ, նման մարդու մը որ կ'զգայ թէ մահով միայն կրնայ վճարել գինը ճշմարտութեան:

Երիտասարդ Սողոմը, ապագայ Հեթանոսաց Առաքեալ, «կամակից էր նրա սպանութեան»:

«Սողոմ ամենէն վերջ բաժնուեցաւ քարկոծուողէն... Ամբողջ գիշեր Սողոմ տպաւորութեան տակն էր քարկոծուողին, ...որուն բաց փնացած աչքերը կը շարունակէին նայիլ իրեն կարծես խաղաղ և անայլալ... Սողոմ չէր կըրնար քնանալ... Քունին նահանջը հետզհետէ կը վերածուէր եփող տանջանքի»:

Գրքի Ե գլխում, Հաւատաբնիչը վերնագրի տակ հեղինակը մեղ ներկայացնում է «հաւատաքննիչ» և «մահուան հրէշտակ» Սողոմի ատելութիւնը քրիստոնէաների դէմ ու նրա մոլեռանդ ուխտադրութիւնը՝ «ի գին ամէն քանի վերջ տալ Գալիլիացիներու աղանդին... Իսրայէլի Աստուծոյն ծառայելու նախամէկն գինովցած, մոռցած էր ամէն չափ ու սահման»:

Բայց ոչ մի պատիժ ու հալածանք չէին կարող ընկճել նորադարձ քրիստոնէաների հոգեկան ուրախութիւնն ու վճռականութիւնը: Այս կեցութեան ու կորովը չփոխեցնում, տաղանկեցնում էր Սողոմին: Նա խռովքի մէջ էր, «կ'զգար թէ իր ատելութեան ալիքները կը փչուէին իր սրտի ափին, անզօր ու հեղձամղձուկ»:

Նա հաւատում էր և զգում, որ քրիստոնէաների առատօրէն «թափուող արիւնը առանց պատճառի չէր... Խնչ էր ասն ուժը», որ նրանց մղում էր «նահատակութեան», մտածում էր նա՝ Սողոմը՝ «ինքն իր մէջ երկփեղկուած... տարակրայներով շրջապատուած, կորսնցուցած էր իր քաջութիւնն ու վճռականութիւնը... Իրեն կը թուէր թէ Յիսուսի հետևորդները հոգեկան նոր կարգի մը կը հնազանդէին, որ ապագային կը նայէր, լեցուն արևով ու հաւատքով»:

Ու Դամասկոսի ճանապարհին վրայ կատարուեց առտուածային հրաշքը. Սողոմի հոգին բացուեց Քրիստոսի ճշմարտութեան ու նոր տեսիլքների, և եկեղեցու մեծ հաւատաքննիչն ու հալածիչը դարձաւ մեծ Առաքեալը Հեթանոսաց՝ աշխարհին տանելու փրկութեան մեծ պատգամը:

Եղիպարդը Սոգոսի դարձի ամբողջ պատմութիւնը նկարագրել է Հզօր լուսարձակումով, գրաւչութեամբ և համոզականութեամբ՝ «Իբրև յայտնութիւնը երկնքին... Ճամբու եղբին ինկած էր Սողոմը, Հզօր ձեռքէ մը գգնուեալ կարծես... «Սողոմ, Սողոմ, ինչո՞ւ կը հալածես զիս»:

րը լուսեղէն մուրճերու մէջ կը ծեծէին իր հողին, անհունութենէն եկած զանդի մը նման» :

Սողոսը, «հակառակ իր մտքի կորովին, տրամասութեան ուժին, կ'ըզարթէ նուաճուած էր անաւոր գորութենէ մը, որ զարկած ու խորտակած էր զինքը: Հողով կապեալ գերի մըն էր, չլթալուած մը» :

Սողոսը Դամասկոսի ճանապարհին տեսած էր Նազովրեցու լուսեղէն կեդրարանքը, լսած՝ նրա ձայնը, որ հրաւիրում էր նրան լինելու պատգամատարը իր Աւետարանին ու փառքին, տանելու՝ Մեսիայի գալուտեան աւետիսը Իսրայէլին և ճշմարտութիւնը՝ բոլոր ազգերին :

Դրբի երկրորդ մասը ամբողջութեամբ նուիրուած է դարձի եկած «Հեթանոսաց Առաքեալ»ի առաքելական քարոզութեանը, ժամանակակից աշխարհում եկեղեցիներ հաստատելու պատմութեանը, Դամասկոսից մինչև Հռոմ :

Հռոմէական կայսրութեան դատան լծի տակ, Հեթանոսական, ալլասերուած բարքերի ու անաւոր ապականութեան պայմաններում, Պաղեստինից հեռու Հրէական սփիւռքում հաստատուած Մովսիսական ալլամբր ու մոլեռանդ համայնքների ծոցում չափազանց դժուար ու վտանգաւոր էր Պօղոսի առաքելական քարոզչութիւնն ու գործունէութիւնը: Առաքեալն ամէն օր ապրում էր առաքելական իր պաշտօնի տառապանքը: Նա «վախ չունէր աշխարհէն. յաւերժութեան նայող իր հողին քաղցրօրէն կրնար նայիլ մահուան աչքերուն... Պօղոսի օրերը հրայրքով լցեցւեալ սխրագործութիւններու երկար շղթայ մը եղան... ոչ մէկ ուժ կրնար բռնադատել Պօղոսին և մարել կրակը ճշմարտութեան որ խորոյկի մը պէս կը բոցավառէր անոր սիրտը... Դիտէր ո՛չ միայն յաղթանակներ շահիլ, այլ նաև պարտութիւններու հանդուրժել, մտքի անվերջով հանգարտութեամբ» :

Երուսաղէմի անդրանիկ եկեղեցին, որը սնուած էր Հրէական աւանդութեամբ, սինակոկից դուրս քրիստոնէական քարոզչութիւնը Հեթանոսների մէջ համարում էր խորթ և վտանգաւոր: Պօղոսի յարաբերութիւնները Հեթանոսների հետ հաշտ աչքով չէին դիտում Երուսաղէմում: Պօղոսը նրանց «կը թուէր Իսրայէլի աւանդութենէն շեղած մը և հակառակորդ Պետրոսին», որը նախապէս Հեթանոսների թլփատութիւնն անհրաժեշտ էր համարում քրիստոնեայ դառնալու համար :

Մինչ «Հեթանոսաց Առաքեալը» անլի եեռու էր դիտում: Նա առաքելական իր երեսնամեայ գործունէութեան փորձի վրայ համոզուած էր, որ Երուսաղէմի կեդրոնը պիտի թօթափի իր բոլոր նախապաշարումներն ու վարանումները, և Աւետարանի լոյսն ու Քրիստոսի փրկագործութեան համաշխարհային պատգամը պիտի տարուի նաև Հեթանոսներին՝ առանց ստիպելու, որ նրանք Մովսիսական օրէնքի մէջոցով զան Քրիստոսի լոյսին և ճշմարտութեանը: Երուսաղէմի եկեղեցին մեղացնում էր Քրիստոսի փրկագործութեամ տիեզերական մշտնակութիւնը, առնչելով գայն երկական ծխակատարութեան :

Պօղոսի միտքն ամբողջապէս գրաւուած էր Հեթանոսներով: Նա իր քարոզութեան առաջին իսկ օրից մտածում էր Քրիստոսի Աւետարանն ազատել երկական կապամեմբրից, մայապաշարումներից և այն զարմնի տիեզերական ելքայրութեան, ազգերի համագործակցութեան Աւետարան: «Ձիգ խտրի, ոչ Հրէի, և ոչ Հեթանոսի... Դուք ամենեքեան մի էք ի Քրիստոս Յիսուս» :

50 թուականին Երուսաղէմի առաքելական ժողովին ներկայացան Պօղոսն ու Բարնաբասը, Հեթանոսների մէջ իրենց աւետարանչութիւնից յետոյ: Ժողովին ներկայ էին Յակոբոս Տեառնեղբայրը, Պետրոս և Յովհաննէս առաքեալները՝ որպէս «կարծեցեալ սիւները եկեղեցու»: Ժողովը թեր և դէմ խօսքե-

րից յետոյ, իրաւունք տուեց Պօղոսի քարոզութեան հեթանոսներէ մէջ:

Սրբազան Հեղինակը իր գրքի Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց և Աւելի հետեւն զլուսնների մէջ ապառիչ կերպով քննութեան է առել այս հարցերը՝ ճշգրիտ վերլուծութիւններով և եզրակացութիւններով. «Աւետարանի ծաւալումը Հեթանոս աշխարհի մէջ, որ Պօղոսի մեծագոյն երազն էր, այլևս իրականութիւն կը դառնար... Յանձն էր Աւետարանի սերմերը հողիներուն մէջ և դանոնք թրջած՝ իր արեւնով: Արեւելքից արեւմուտք, հիւսիսից հարաւ, բոլոր ազդերը սեղան պիտի նստէին երկնքի արքայութեան մէջ Արարչամի, Իսահակի և Յակոբի հետ, որպէս նոյն Աստուծոյ որդիներ և իրարու եղբայրներ. «Պօղոսի մեծ երազը իրականացած էր, Յիսուս կը յաղթէր Մովսէսին և հիմը կը դրուէր Նոր Ուխտի հասկացողութեան և քրիստոնէական ապագայ կայսրութեան... ուր գիտակից գրկախառնումով իրարու պիտի մօտենան Հրեան ու Հեթանոսը, զերին ու ազատը, բարբարոսն ու Սկիւթացին», որովհետև Յիսուսը Բուդդիէն էր ազգերի միջև գոյութիւն ունեցող միջնորդը:

Պօղոսի երազն էր Փոքր Ասիայի երկրներէց յետոյ Աւետարանի յոյսն ու պատգամը տանել նաև Աթէնք, Կորնթոս, Հռոմ, Եւրոպա:

Երեսնամեայ առաքելական թեղմնաւոր, փոթորկալից գործունէութիւնից յետոյ, 60 թուականի աշնանը, Պօղոսը, վերջին անգամ լինելով, ուխտի դնաց Երուսաղէմ՝ Հիմնախառնում ամբապնդելու համար իր շատաստած քրիստոնէական համայնքների և եկեղեցիների հոգևոր սերտ կապը Երուսաղէմի կենտրոնի հետ: Բայց «Պօղոսի աչքերը Հռոմին ուղղուած էին, հոն պէտք էր լլլար յաջողի վայրը իր յաղթանակին»: «Պարտ է ինձ և զՀռոմ մտնանել... տալ վկայութիւն Հրէից և Հեթանոսաց», որովհետև Պօղոսի հաւատքը զգալցում է չէր որ կը լինէր, այլ իր մէջ ապրող զօրութեան մը գիտակցութիւնն է:

Երուսաղէմում ուխտաւորութեան այդ օրերին Պօղոսը Հրեաների սաղարտնիւթ ամբաստանուեց, երբ գտնուեմ էր տաճարում, որպէս «ամբողջ աշխարհում Կոնստանդ Հրեաների ապականողն ու խռովեցնողը», ձերբակալուեց, բռնատարկուեց և ապա շղթայակալ Հռոմ տարուեց, դատուելու կայսերական ատենուում, քանի որ հռոմէական քաղաքացի էր:

Հռոմում փոխիստփայ Սենեկայի ու Ներոնի կին Պոպէա Սարինա կայսրուհու միջնորդութեամբ, Պօղոսը երկու տարի բանտում մնալուց յետոյ, ապաւուեց և դարձեալ սկսեց իր առաքելական գործունէութեանը. «Ամբողջ աշխարհը դրաւելու հաւատքով... Հռոմէական կայսրութիւնը... ներքնապէս փրակել սկսած էր: Խաչին հրաշքը իրրև գերագոյն յեղափոխիչ մարդկային բնկերութեան, սկսած էր իր գործը... Եւ Պօղոս պատրաստ էր փրատին նաւելու իր դէմ բացուող ծովերուն վրայ»: Արդարև Պօղոսի համար չկային խելադար Ներոնը, Հռոմէական մեհակներն ու բազիլիկները, կար միայն Քրիստոսը, որը լցնում էր ցամաքը, ծովը, ողջ տիեզերքը և մարդկանց հողիները:

Արգարեւ, Հեթանոսաց Առաքելի խօսքի, շարժունների վրայ կար միշտ կենդանի Աստուծոյ յորդահոս հոգին: Նրա անքերը միշտ փայլում էին երկնային անսովոր լոյսով, իսկ ճակատի վրայ բազմել էր վեհափառութիւնը մի մարդու, որ կարող է ամէն վտանգի մէջ մտնել՝ ազնիւ ու ճշմարիտ լինելու համար: Ու Պօղոսը խօսում էր համոզումի այնպիսի կրակով, որ նրա ամէն մի բառը ցնցում էր ժամանակակից աշխարհի գաղափարական-հասարակական հիմքերը:

Սրբազան Հեղինակը իր գրքի 138-192 էջերում նկարագրում է տիրական ու համոզիչ չեւտով Պօղոսի կեանքի վերջին օրերի գործունէութիւնն ու քարոզութիւնը և ապա նրա եղբրական նահատակութիւնը Հռոմում:

Շատ զեղեցիկ և իմաստային է այն աւանդութիւնը, որ իր գրքի մէջ յիշատակել է Եղիշվարդը Ներսէս և Հռոմի Խրդեհը գլխում:

Ըստ աւանդութեան, Հռոմում մի հրապարակային կայսերական շէնքերի ժամանակ բազմութեան մէջ էր նաև Պօղոսը և ցանկանում էր «զէթ անգամ մը տեսնել աշխարհի տէրը»՝ Ներոն կայսրը: Եւ ահա դիպումսով «այդ երկու մարդերը — Պօղոսն ու Ներոնը — բոպէ մը իրարու նայեցան... այդ վայրկեանին երկրային երկու իշխանութիւններ, որոնցմէ մին արիւնձալի երազի մը պէս պիտի ցնդէր, իսկ միւրը մշտնջենական տիրապետութեան պիտի հասնէր, կը գիտէին դիւրաւ»:

Անցան դարերը, անցան կայսրերն ու Հռոմէական լեզէոնները, անցան նահատակութեան ալիքները և յաղթանակեց Քրիստոսը: «Իրմէ առաջ բոլոր դարերը Իրեն կը նային և Իրմէ վերջ ամէն ինչ Իր նկարագրին կնիքով է կնքուած»:

Սոյն ուսումնասիրութեան վերջին գլուխը կրում է վարագոյրը այլաբանական վերնագիրը:

Ներոնի չարագործութիւնների, բռնութեան, ճշման և Հռոմի ապականութեան, ոճրագործութեան ու նաև «խելագար շուրջպարի» վերջին «վարագոյրն» է փակուում 63 թուականին Հռոմի քրիստոնեաների մասսայական, կազմակերպուած կոտորածով: «Պարագան ուրիշ կերպ էր կրնար բլլալ բնկւրութեան մը համար, որ Հիննուած էր կեղեքումներու, խզոճութիւններու և պղծութիւններու վրայ... Հռոմը կ'իշխէր աշխարհի, սակայն զինքը մօտէն ճանչցողները կը զգային թէ դիակի մը դարձահոտութիւնը ունէր... Հռոմ դէպի անդունդ կը գահավիժէր»:

Նահատակուածների արեան հեղեղի մէջ աճում էր Եկեղեցին, և պրոդարերում էին հոգիների մէջ, հզօր ու անխորտակ, Պօղոսի քարոզչութեամբ սերմանուած Աստուծոյ խօսքերը: Հռոմի Եկեղեցին, որ Պօղոսի քարոզչութեամբ զոյալը ծառի մը նման սկսած էր աճիլ Հռոմի հրդեհէն առաջ, այժմ ճղակոտոր կը մնար, «Փագանձին ճիրաններէն փշրուած»: Քրիստոնեաները նահատակուած էին այն հաւատքով, որ «ճշմարտութիւնը չէր կրնար թաղուիլ և վերջական յաղթանակը իրենցը միայն կարող էր լինել»:

Այո՛, Հռոմի հոգևոր, բարոյական, քաղաքական-հասարակական հոգևաբքը կարող էր դեռևս երկարել, բայց մօտ էր չարի վախճանը և Հռոմի կայսրութեան կործանումը: Քրիստոնեայի թափուող արցունքներէն և արիւնէն պիտի չաղախուէին որմերը Քրիստոսի Եկեղեցիին և նահատակներու ոտկոճերուն վրայ պիտի կանգնէր կաթողիկէն Իր փառքին»:

Քրիստոնէական եկեղեցու առաջին դարերի պատմութիւնը ցոյց է տալիս, թէ որքա՛ն անհրաժեշտ էին նրա դատի յաղթանակի համար նահատակութիւններն ու նախանձախնդրութեան այն կրքոտ ոգին, որ չէր վախնում ոչ մի վտանգից և ներշնչում էր նրա սրբերին ու մարտիրոսներին դիմադրելու բոլոր դժգոհ փորձութիւններին:

Ներոնի հալածանքների ծանր ու վտանգաւոր օրերին Հռոմում էր նաև Պօղոս առաքելը: Նա արցունքը աչքերին և աղօթքը շրթներին քաջալիրում և սրտապնդում էր հաւատացեալներին: Նրա հրաժեշտի խօսքերը տողորում էին քրիստոնէական անկոտորում հաւատքի վերմեռանդութեամբ և հաստատ լուստեսութեամբ, իսկ նահատակողների «հոգին գտած էր յաւերժական խաղաղութիւնը»: Հռոմի քրիստոնեաները մեռնում էին, հեղինակի զեղեցիկ ու պատկերաւոր արտայայտութեամբ ասած, «ապագայի երազին ծաւրում վրայ, ի րաւսգի ողբերը կարեմային շարունակել գայն: Վասնզի ողբերը չեմ ապրիր, երբ մեռելներում երազը մեռնի»:

Հոռոմում նահատակուեց նաև Պօղոս առաքեալը, 63 թուականին, «Ազուէ Սալվիէ» հրապարակում. «Հակառակ խոշտանգումներուն և հոգեկան տառապանքին, առաքեալը կը պահէր իր կողմագնաց կեցուածքը... և ոչ մէկ ձեռք կրնար փշրել Տիրոջ այն լուսեղէն անօթը», որ Պօղոս առաքեալն էր:

Չափազանց յուզիչ, տպաւորիչ կերպով ու քնարական շնչով է նկարագրուած Պօղոսի նահատակութեան վսեմ պահը:

«Պատրաստ էր արդէն կոծողը, որուն թով կարշնեղ դահիճը տապարին կոթնած կը կենար: Սակայն առաքեալը դուրս էր պահէն. անիկա սկեռարիւր կը նայէր իր առջև բացուող յարանուն լոյսին, որ երկինքէն վար կ'իջնէր հսկայ ամպնովանի մը նման... Յետոյ տեսաւ ծաւալող լոյսին մէջ նազովբեցի Յիսուսին դէմքը՝ որ իրեն կը ժպտէր: Պօղոս արցունք տեսաւ Անոր աչքերուն խորը, երբ իր վիզին կ'ընդունէր դահիճին տապարը»:

Այսպիսի գեղեցիկ, սրտազրու պատկերով է աւարտուած Եղիվարդի «Հեթանոսաց Առաքեալը» գիրքը, որն ընթերցում է յարանուն հետաքրքրութեամբ, պատմական մի վէպի գրաւչութեամբ ու անմիջականութեամբ:

Գիրքը շարադրուել է Տէրտէրեանական թափով, ընդգրկումով, պատկերաւոր, հարուստ, հիւթեղ ու ջինջ լեզուով, ոճի թափուլի համար, տաք սըրտով, հաւատքի կրակով, քնարական շնչով, հոգեբանական խորը և ճշգրիտ նրբերանգներով, յստակ մտածողութեամբ, նիւթի խորը խմորութեամբ, «Գործք առաքելոց»-ից և Պօղոս առաքեալի թղթերից, զանոնք ընդհանրու յայտարար թերեւել բացառիկ կարողութեամբ: Գիրքն ընթերցելիս լսում ես նաև այսօր Պօղոս առաքեալի՝ այդ մեծ մտածողի ու կազմակերպչի բոցաշունչ խօսքը, նրա քարոզութեան տաք շնչառութիւնը, արտի զարկերն ու փոթորկոտ հռչակն: Նա մեր ժամանակակիցն է, մեր հաւատքի կենդանի դրօշը՝ իր քարոզութեամբ, առաքելական իր թղթերով, իր ներքին կրակներով, քրիստոնէութեան դատի պաշտպանութեան իր անհաճանջ նուիրումով:

Եղիվարդը արուեստագէտի վարպետութեամբ, հոգեբուխ հիացումով, երախտիքով, ծովացած սիրով, ռոմանտիկ խռովքով և զանանուն կախարհանքով է գծել դարերի խորքից եկող մեծ առաքեալի կեանքի, քարոզութեան և աշխատանքի լուսեղէն պատկերը, նկարագրելով նրա արրազան ջանքերը, հոգեկան տաղնապաններն ու ուրախութիւնները և մասնաւոր ինքնազննութիւնը, քրիստոնէական մտածողութեան ձևաւորման, դարգացման և եկեղեցու ամրապնդման գործում. «Պօղոսի կեանքը ուխտագնացութիւն մըն է տառապանքի տառապանք, կասկածի կասկած, մեռելի՜ լոյս, որանելու Մեսիան, որ առաջին մէկ օրէն. իր ցականագրաւիւմ դարձել յետոյ, գերագոյն իրողութիւնը եղաւ իր կեանքին»:

* * *

Գրախօսականի սոյն սեղմ էջերում կարելի չէ սպառիչ կերպով խօսել «Հեթանոսաց Առաքեալը» գրքի բացառիկ արժանիքների և նշանակութեան մասին: Մեր ցանկութիւնն է եղել՝ ընթերցողների ուշադրութեանը ներկայացնել մեր օրերի Հայ եկեղեցական մատենագրութեան գեղեցիկագոյն և արժէքաւոր նուաճումներից մէկը՝ հանդիսացող Եղիվարդի «Հեթանոսաց Առաքեալ»-ի ու սուսնասիրութիւնը՝ որպէս սեղանի գիրք ամէն մի բարի ու բժանիշիչ հաւատացեալի, միաժամանակ Քրիստոսի Աւետարանի քարոզութեան ու նրա Ս. Ե. կեղեցու հոգեւոր ծառայութեան կոչուած իւրաքանչիւր տիպար ու նախանձախնդիր հոգևորականի համար:

ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏԵԱՆ